

# ԱՒԵՏԱՐԱՆ



## ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ՊՐԻՆՍԻՊԱԿԱՆ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

“ԱՅԱԵՍ ԶԵՉԻ ՄԵՏ ՈՒՐԱԽՈՒԹԵԱՆ ԱՒԵՏՍՍ ԿՈՒՏԱՍ” ԴՈՒԿ Բ 10

ՀԱՏՈՐ 10

ԿՈՍՏԱՆԴՆՈՒԳՕԼԻՍ ԸԳՐԻՒ 8 1857

ԹԻՒ 60

### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Վեճակահանութիւն: — Սուրբ Գրքէն Հարցումներուն պատասխաններ: — Ի՞նչ է Եւստորանի Կարողի մը: — Կարողութեամբ բուսած խոտի մը զորութիւնը: — Սայրեռուն համար: Սայրեռուն զգուշութիւններ: — Տալոյց համար: Եստուած ճեղքէն կրնայ տեսնալ: — Լոյսի մասին կարծիքներ: — Կրօնական լուրեր: — Կենդանաբանական: Սրտանոց: Փայլելոց միջոցներ: Դճանքներու ստուգները: — Կարգաբանական լուրեր:

### ՎԻՃԱԿԱՎԱՆՈՒԹԻՒՆ

Վեճակահանութեան (փոխանակ) գործաճնութիւնը աս երկրի մէջ օրէ օր հասարակ բան մը ըլլալու վրայ է, ուստի աս նիւթի վրայով կ'որոշենք մեր ընթերցողներուն բանի մը գիտողութիւններ առաջարկելու:

Հաւանական է որ շատ մարդիկ աս բանը յառաջացնելու ետեւէն, ու պիտի շատերն ալ անոնց սիրտ կու տան տոմսակ ծախու առնելով, որոնք բնաւ հինգ բողբէն չեն խարճեր սա խնդիրներուն վրայ խորհելու թէ վեճակահանութիւնը արդեօք օրինաւոր է թէ չէ, ու թէ անոր հասարակութեան վրայ ըրած ազդեցութիւնը աղէկ է թէ գէշ: Ես նիւթի վրայ մեր ընթերցողներուն անաչառ ուշադրութիւնը խնդրելով, առաջ պիտի երթանք ցուցնուելու թէ վեճակահանութեան բերմունքը չար՝ ու մի միայն չար է, ու թէ սկզբունքի նայելով Եստուածաշունչին բարոյականին հակառակ է:

1. Վեճակահանութիւնը ծոյլ սովորութիւններու պատճառ կ'ըլլայ: Պրզտիկ գուճար մը ստակի համար մեծ հաստուցում մը կը խոստացուի, ու աս հաստուցումը առնելու յոյսը շատ անգամ միտքը կը պղտորէ ու կանոնաւոր գործ գործունէն անյարմար կ'ընէ: Ես մարդը որ ինքզինքը թող կու տայ վեճակահանութեան տոմսակներ ծախու առնելու սովորութիւնը ստանալու, առանց տարակիցի իր գործին վրայով ինչ որ է անիկայ, անհոգ պիտի ըլլայ, ու ծոյլ մարդ մը կ'ըլլայ: Մարդկային բնութիւնը անանկ է որ աշխատել չսիրեր, ու ապրուստ գտնալու համար միշտ ամենէն դիւրին ճամբան կը փնտրէ: Մարդ ինքիքին կ'ընէ, թէ որ վեճակահանութեան տոմսակի մը 5 զուտուշ տալով կրնամ 100 հազար զուտուշ ձեռք ձգել, ինչո՞ւ համար ինքզինքս գործով պիտի յոգնեցունեմ:

Եսիկայ միայն կարծիք մը չէ: Հարիւրաւոր ու հարգարուր մարդիկ վեճակահանութիւնով մեկանց հարստանալու խարստած յոյսով ծոյլ բնաւորութիւններու տեր եղան՝ որոնք մոլութեան ու կործանման տարին:

2. Վեճակահանութիւնը արծաթսիրութեան պատճառ կ'ըլլայ: Երծաթսիրութիւնը շատ մարդոց վրայ բնականաբար բաւական զօրաւոր է, արուեստական գրգռումի կարօտութիւն չունի: Ես բանին գէշ սկզբունք մը ըլլալը յայտնի է Սուրբ Գրքէն, ինտոր որ նաև մեր ամէն աւուր գիտողութիւնն: Եսիկայ «ամէն չարութիւններուն արմատը» կը կոչուի, և իրաւ ալ անանկ է: Երծաթի համար ամենէն մօտ ու ամենէն սիրելի բարեկամները իրարութիւնով կ'ըլլան, ճնողներն իրենց տղոցը գէտ կ'ըլլան, ու տղանք իրենց ճնողացը, ու սիրտը բարի պէս կը կարծանայ: Երծաթի համար մարդը արմէն տեսակ խաբէութիւնը ու անիրաւութիւնը կը գործէ, ու ետ չկենար բռնութեամբ իր դրացին բնակարանը

մտնալ, ու մինչև անգամ անոր կեանքը վերցունելէն: Եսոնք արծաթսիրութեան պտուղներուն մէկ քանինն են: Հիմա փաստի կարօտութիւն չկայ վեճակահանութեան ճիշդ բերմունքը անով զբաղած մարդոց մէջ արծաթսիրութիւն աճեցունող ըլլալը հաստատելու համար: Եսոնք հասարակ գործի միջոցով կամաց կամաց ստակ վատրելու գոչ չեն: Հապա յոյս կ'ընեն մեկանց հարստանալու, ու ասիկայ կենաց մեծ բարեքը կը սեպեն: Ի՞նչպէս բնական է ասանկ մարդոց մէջ արծաթսիրութեան կատարել կիրք մը ըլլալը, որն որ վեճակահանութեան ամէն մէկ նոր բաղադրանքի գէպը մը անանկ ու կը զօրանայ:

3. Վեճակահանութիւնը մարդը ըրալով կ'ընէ: Միշտ գիտուած է թէ մարդիկ ինչ որ դիւրութեամբ վատրելու են, անիկայ դիւրութեամբ կը խարճեն: Կոչ է որ հարգարաւոր ու միլոնաւոր զուտուշներ ինչ միջոցով որ ըլլայ, մեկանց իրենց ձեռքն անցնին, անոնք գրեթէ բոլորովն շուտով ինչ և էր ցէ անխել ճամբով մը անիկե ազատել պիտի նային: Եսոնք իրենց պէտքը չեղած բանի համար կը խարճեն անիկայ, ու այսպէս անխել ճամբեր ընելու սովորութիւն մը կը ստանան: Կամ թէ մեծ գործի մը մէջ կը մտնան, յուսալով թէ անով իրենց հարստութիւնը մեծապէս պիտի աւելցունեն, ու նայիս որ ամէնը մեկանց կը կորսուի, ու իրենք կարելի է որ ծանր պարտքի տակ կ'ըլլան, ուրկից բնաւ չեն կրնար ինքզինքնին ազատել:

4. Վեճակահանութիւնը շատերուն քսալը կը պարպէ՝ որոնք միայն իրենց օրական աշխատութիւնով կ'ապրէին: Թէ որ միայն հարուստները ըլլային վեճակահանութեան տոմսակ ծախու առնողները, բաղադրաբար այն չափ հոգ ընելու բան մը պիտի չըլլար, բայց բանը ամենէն ասանկ չէ: Բազմաթիւ մարդիկ որոնք իրենց ու իրենց ընտանեացը պարուստ ճարելու համար մեծ գոտարութիւն ունին, ու հետևապէս չեն կրնար ստակ մը նետել, շատ ստակ կը խարճեն վեճակահանութիւններու: Եսոնք մէկ կամ շատ տոմսակներ ծախու կ'առնեն, ու պարապ կ'ըլլան, հետևապէս տուած ստակին կը կորսուի: Ես կորսնցուցածնին նորէն վատրելու և մեծ հաստուցում մը ձեռք բերելու յուսահատ յոյսով մը, կրկին և կրկին կը գործին, կարելի է 10—20 տոմսակ մեկանց ծախու առնելով: Կորկին պարապ կ'ըլլան: Ու այսպէս խել մը ստակ որ պէտք էր հացի տրուիլ աս անխել ճամբով կը կորսուի: Եսոնք մէկ ծախու առած ատենին, միտքերնին կը գնեն թէ ալ ետքինը պիտի ըլլայ, բայց նայիս որ ան տոմսակներն ալ պարապ կ'ըլլան, ու ասիկայ կը դրդէ մարդը որ նորէն ծախու առնէ, յուսալով թէ հետևեալ անգամին աւելի բաղաւոր պիտի ըլլայ: Եսանկով պիտի խորունկ գոտարութեան մէջ կը թաղուին:

5. Վեճակահանութիւնը կ'առաջնորդէ մարդիկ խաբելու: Վեճակահանութիւնը հանելու մէջ միշտ մեծ անիկե ճութեան ցոյց մը կ'ըլլայ, բայց ամէն մարդ գիտէ թէ խաբեարյութեան մեծ պատեհութիւն ու քաջալերութիւն կայ, ու թէ պէտեւ չենք ուզեր ըսել թէ ամէն պարապայի մէջ խաբէութիւն կը գործուի, բայց ըստ մեծի մասին անտարաւորս անանկ կը պատահի: Վեճակահանութեան վերակացունքը կ'աշխատին

որ ելլալու իրը իրենց ուզած մարդոցը ելլայ, ու խարախութիւնը դիւրաւ երևան չելար: Եսիկ 'ի գատ անհամար խաբելու կերպեր կան: Երբ որ վեճակահանութեան գրուած բանը տուն կամ ազարակ կամ ձի կամ ժամացոյց կ'ըլլայ, շատ չափազանց արժէք մը կը գործի ան բանին վրայ, ու տոմսակ առնողները քիչ պատեհութիւն ունին կամ բնաւ չունին ապրանքին ճիշդ արժէքին վրայ առաջուց դատում ընելու:

6. Բայց քիչ մըն ալ վեճակահանութեան մէջ պարունակուած բարոյական սկզբունքներուն նայինք: Բոլոր կանոնաւոր ու արդար գործքերու մէջ ան որ կ'աշխատի, կամ ան որ վարձկան կը բռնէ, ան որ ծախու կ'առնէ կամ ան որ կը ծախէ, արժանաւոր ու արդար փոխանակութիւն մը կ'ընէ: Գիցուք թէ ես մարդ մը կը վարձեմ կտոր մը գործ ընելու, ու արդարութիւնը կը պահանջէ որ անիկայ իր կողմէն գործը լինցունէ բոլոր սակարկութիւններուն համեմատ, ու որ ես ալ իմ կողմէս իր վարձքը հատուցանեմ: Մարդ մը շուկան ինձի օխա կը խահունէ կամ շարք կամ իւր մը ծախէ, ես ալ անոր գինը իրեն կը վճարեմ, ու ասանկ օրինաւոր փոխանակութիւն մը կ'ըլլայ: Բայց նայինք թէ վեճակահանութեան ինչ է: Բանք թէ մարդուն մէկը տուն մը կամ պարտեղ մը ունի որն որ վեճակահանութիւնով ծախելու կ'առաջարկէ: Գիցուք թէ անոր միայն արժանաւոր արժէքը վրան կը գնէ, ու չէ թէ ինտոր որ շատ անգամ վեճակահանութեան մէջ կ'ընեն, անոր երկու կամ իրեք անգամը: Եսոնք գինը 100 հազար զուտուշ է, ու ինք 20 հազար տոմսակ կը հանէ, որոնց ամէն ալ 5ական զուտուշ կը ծախուին: Եսպէս կ'առնէ իր տանը համար 100 հազար զուտուշ, որ ատեն աս գուճարը իրեն վճարողներէն միայն մէկը առաւ իր տուածին փոխարէն: Ինք 19,999 մարդոցմէ առաւ ստակը, որ ըրաւ 99,995 զուտուշ, ու անոնց փոխարէն բնաւ բան մը չտուաւ: Ես բանը սկզբունքներն նայելով գործութիւն է: Դճմարիտ է որ անոնք անխել գոտարեցան որ աս գուճարը հաճութիւնով իրեն տուին, բայց խաբուելով մըն էր, որուն համար պատասխանատու ինքը: Դճից պայտս արեկոց՝ որ գաւաթ մը խմելու ծախու կ'առնէ, հաճութիւնով կ'ընէ, բայց ասիկայ ծախողին յանցանքը կը պղտիկցունէ: Ես մարդը որ յիշեալ վեճակահանութիւնը կ'ընէ, առաջուց գիտէ թէ 19,999 մարդոց յոյսը անշուշտ պարապ պիտի իլլայ, ու իրենց ստակներն փոխարէն իրմէն բան մը պիտի չառնեն, թէ պէտեւ ամէն մէկը յոյս կ'ընեն թէ վեճակահանութիւնը իրենք պիտի վատարկին՝ ու ստակներն աս մարդը անտարբերութեամբ կը ձեռարկէ իր առած ստակը, ու իր յաջողութեանը վրայ կ'ուրախանայ թէ աղէկ առուտուր մը ըրաւ:

Եսպէս պայմառ կը տեսնանք որ վեճակահանութիւնը սկզբունքի նայելով սխալ ու միանգամայն վնասակար է ժողովուրդին ամէն կողմէն: Ես պատճառաւ աս բանը աշխարհիս բանի մը երեւելի երկիրներուն մէջ սաստիկ արդիւնաւոր է:

Շատ յայտնի է որ Վրիստոսի աշակերտ մը չկրնար աս բանին մէջ մտնալ թէ ինք վեճակահանութիւն չենելով և թէ տոմսակ ծախու առնելով: Ուստի սիրով կը յորդորենք մեր ըն-

թերցողները որ խիղճ ընկով ես կենան վեճակահանութեան ամէն կերպ հաղորդակցուեցնեն, ու բոլոր իրենց ազդեցութիւնը բանեցունեն խափանել տալու անանկ գրութիւն մը, որ ասանկ կը հակառակի Վրիստոսի Եւստարանին, ու ասանկ լեցուն է չարիքներով:

### ՄՈՒՐԻ ԳԻՐԳԵՆ ԶԱՐՑՈՒՄՆԵՐՈՒՆ ԳԱՏԱՍԽԱՆՆԵՐ

(Հարոստակոսի \* :)

- 78. Վրիստոսի մէջ բնակիլ: (Տող. Ժ. 4.) «Իմ մէջս կեցէ՛ք, ու ես ձեր մէջը»:
- 79. Չաք. Թ. 16: «Բանդի անոնք երկրի վրայ խափ քարերու պէս պիտի բարձրանան»:
- 80. Մատթ. Ժ. 3, 4: «Թէ որ զարձի չգաք և արդոյ պէս չըլլաք, երկնից թագաւորութիւնը բնաւ պիտի չմտնէք: Ուստի սով որ իր անձը աս տղուն պէս խոնարհեցունէ, անիկայ է մեծ երկնից թագաւորութեանը մէջ»:
- 81. Բ. Տիմ. Ժ. 3, 4: «Երբ դուն նեղութիւններու համբերէ՛ Վրիստոս Յիսուսի բարի պնդողի մը պէս: Մէկ զինուորայ մը աս կենանքիս գործառնութիւններով չըզաղիր, որ զօրավարին հաճոյ ըլլայ»:
- 82. Ըռակ. Ի. 1: «Երբ արները առոյգ աստիճան պէս քաջաւոր կ'ըլլան: Միք. Ե. 8: Եւ Յակոբին մնացորդը ազգաց մէջ, շատ ժողովուրդ մէջ՝ անանկ պիտի ըլլայ, ինչպէս առիւծ մը անտառի զազաններուն մէջը, կամ առոյգ առիւծ մը՝ ոչխարաց Տօտերուն մէջը»:
- 83. Մատթ. Կ. 3: «Բանդի իր ժամանակին իր պտուղը կու տայ: Երբմ. Ժ. 8: Իր արմատները գետով երկրնցնելով՝ տարութեան գաւը չտեսներ, հապա անոր տերը կանանչ կ'ըլլայ, ու երաշտութեան տարին նեղութիւն չըջեր, ու պտուղ տալէն ետ չմնար»:
- 84. Վաղը:
- 85. Բ. Կորնթ. Ե. 20: «Ուրեմն Վրիստոսի կողմանէ որեւէ անհոգութիւն չ'ընէ, իրբ թէ Եստուած կը բարեխօսէր մեզմով, կ'աղաչենք ձեզի Վրիստոսի կողմանէ, հաշտուեցէ՛ք Եստուոց հետ»:
- 86. Եբր. Գ. 1: «Կայեցէ՛ք մեր դաւանութեանը Ըռաքեալին ու Վահանայագետին՝ Վրիստոս Յիսուսին»:
- 87. Կ. Խոնարհել Տերոյը առջև: Բ. Մնաց. Ե. 14: Յակ. Գ. 9, 10: Խ. Խոստովանիլ մեղքերը: Վ. Լու. Ի. 40: Յոր. Լ. Գ. 27: Գ. Սեղ. Գ. 26:
- 88. Եբր. Ժ. 1: «Հաւատքը յուսացունած բաներուն հաստատութիւնը՝ ու չերեցած բաներուն ապացոյցն է»:

Մանուկներն ընդ հրատարակուելու համար:

ԻՆՉ Է ԱՆԵՏԱՐԱՆԻ ԲԱՐՈՁԻՉ ՄԵ

(Հարոյնակոթիւն \*):

Վարդապետ Վայց ԲՅՈՒՅԱԿԵՍ Կ'ըլլայ որ խաբեբայութեան պաշտօնեաները գործուն ատանկ գեղեցիկ կ'երևան:

Սոքոթ Գիթի • Մտիկայ անկարելի բան մը չէ • բնաւ չլսեցի որ ինքը Սատանան ալ լուսաւոր հրեշտակի կերպարանք կ'առնէ" իր վրան • Թէ որ անանկ է "ալ մեծ բան մը չէ, որ անոր պաշտօնեաներն ալ արդարութեան պաշտօնեաներու նման կերպարանք կ'առնեն": (Բարդի • Ժ • 14—15):

Վարդապետ Նըբէք չըլլա՞ր որ ասոնց խաբեբայութիւնը յայտնի ըլլայ մարդոց առջևը:

Սոքոթ Գիթի • Ես լուսաւոր կերպարանք որ իրենց վրայ առած են՝ ատեն ատեն կ'իջնայ իրենց կոնակէն, որ ան ատեն յայտնի կ'ըլլայ իրենց ամօթալի խայտառակութիւնը • բայց ինչպէս որ առաջ ըսի, անոնց ետեւէն գացողները կոյր ըլլալուն համար, աս փառաւոր վերաբերուն ինկած ատենները չեն կրնար կամ մանաւանդ չեն ուզեր տեսնել աս այլանդակ հրեշներուն սուկալի կերպարանքը, — բայց թող որ խօսքս շարունակեմ:—

6 • Եսոնք կը կոչուին կոյր պահապաններ: (Եսայ • Ժ • 10): Եւանջան ժողովուրդին՝ որուն հոգևոր պահապանը կոյր է: Ենիկայ իր գործին վրայ գիտութիւն չունի, և ժողովուրդին ալ չկրնար սորվեցունել • հետեւ պէս պահապան ըլլալու յարմարութիւն չունի:

Պահապանը կոյր է: Իր հօտը ճըշմարտութեան մարգագետիններուն և կենաց գետին ջուրերուն չկրնար առաջնորդել՝ որ հոն իր հոգեղութեանը յանձնուած գառները և ոչխարները իրենց յարմար ճարակ և սնունդ գտնեն: Չկրնար վտաստիւրտները միթիթարել, տկարներուն պաշտպան ըլլալ և կողերը կամաց քշել, ու գառները իր բազուկներով տանիլ:

Պահապանը կոյր է: Փրկութեան շահիչն մոլորածները չտեսնել, որ գանձեր գարցունէ: Իր իշխանական դաւազանը և Սիօնի երգերուն եղէգնափողը չկրնար գործածել, որոնցմով Էմմանուէլին ժողովուրդը կրթուի և իրենց արտասուքի հովիտին մէջ միթիթարուի: Եստիկով Եստուծոյ ժողովուրդը, անոր ոչխարները "ամէն լեռներու վրայ, ու ամէն բարձր բլուրներու վրայ կը մտնին, ու բոլոր երկրի երեսին վրայ կը ցրուին": (Եղեհ • Լ • 6):

Պահապանը կոյր է: Ե, յետներ թշնամիին մօտենալը՝ որ ոչխարի հագուստով կամաց կամաց կը մօտենայ հօտը յափշտակելու, ցրուելու ու զանոնք պատառելու համար: Չգիտեր թէ Գառնուկին փարախին թշնամիները որքան բազմութիւն են, և անոնց խորամանկութիւններն ալ բազմատեսակ են: Փոխանակ անոնց վրայ աչալը ջուրութեամբ հսկելու՝ աչքերը գոցած մէկ կողմ կը քաշուի կամ վանքերու կամ անապատներու մէջ, և իր հովուական պահապանութիւնը հեռուէն կ'ընէ, այնքան հեռուէն որ թշնամիին մօտենալը որոշակի չտեսնել: Իսեղճ աւմիլ ու տկար ժողովուրդը "մենք պահապան ունինք" ին յոյսովը խաբուելով՝ մէկիկ մէկիկ Սատանային գիշտիչ ճանկերուն յաւիտենական որս մը կ'ըլլան: Պահապանին կուրուութիւնովը և անհոգութիւնովը հազարաւոր անմահ հոգիներ գժոխքը կը թափին: (Եղեհ • Լ • 5):

\* Տե՛ս թիւ 38—57:

Պահապանը կոյր է: Ենիկայ Եստուծոյ Իրեղեցիկն մէջ խաբեբայութիւն կը քալէ՝ ձեռքը դաւազան մը բռնած: Մտանգի ժամանակ սուտ ապահովութիւն կու տայ, և երբոր իրեն հարցուի թէ "ով պահապան" գիշերուան համար ի՞նչ, գիշերուան համար ի՞նչ լուր կայ" ինք փոխանակ ըսելու թէ "առաւօտը կու գայ, ու նաև գիշերը, դարձե՛ք ու եկէ՛ք", (Եսայ • Ժ • 11, 12) կ'ընէ անոնց "խաղաղութիւն, խաղաղութիւն է, երբոր խաղաղութիւն չկայ": (Եղեհ • Ժ • 14):

(Պիտի շարունակոթիւն):

Ե • Յ • Ն •

ՔԱՂՅՈՒՆԻՆԵՐԸ ԸՍՏՈՒՄԻ ԽՕՄԻՒ ՄԵ

ԶՕՐՈՒԹԻՒՆԸ

Ոմանք շատ ենթակայ են խիստ և ցատկոտ խօսքեր բանեցունելու • գուցէ կը կարծեն որ ասանկ ընելով՝ իրենց խօսքին աւելի շուտով ակնմը պիտի կախուի: Ենոնք՝ ամուր և գոռոզ կերպով մը կը խօսին, որ վրանին խնդրանքներէն զատ ուրիշ օգուտ մը չունի, և իրենց տուած հրամանն ալ ի գործ չգրուելով կը մոռցուի, միայն իրենց ժամտաբարոյութիւնը կը յիշուի:

Մըշափ զօրաւոր է քաղցրութեամբ ըսուած խօսք մը: Խստութեամբ ըսուած խօսք մը, կամ ծեծի մը չկրցած ըրածը՝ աս կ'ընէ, ասպտամբ կամք մը կը նուաճէ, հպարտը կը խոնարհեցունէ և սքանչելի բաներ կ'ընէ:

Մինչև անգամ, շունը, կատուն կամ ձին, թէպէտ ինչ ըսելու չեն հասկընար, կրնան հասկընալ իրենց քաղցրութեամբ խօսած ատենը:

Օր մը մարդուն մէկը փողոցի մը մէջ սայլ մը կ'անցունէր • ձիուն քաշածը ծանր բեռ մըն էր, և մարդուն ուզած կողմը չըսածաւ: Մարդը դափն քնութեան տէր մէկ մըն էր, և ծեծեց ձին, բայց անիկայ շտակ ճամբան չէր ուզեր երթալ: Արեւը մարդ մը, որ սայլին հետն էր, ձիուն քովը գնաց և քաղցրութեամբ անոր անունը տալով, ձիուն վիզը շոյց: Չին՝ դարձուց իր գլուխը, և իր մեծ աչքերը մարդուն վրայ անկեց, իբր թէ կ'ուզէր ըսել որ՝ "Ես քեզի համար ամէն բան պիտի ընեմ, որովհետեւ իմ հետս անուշութեամբ վարուեցար", և ան նեղ ճամբէն անանկ մը անցուց սայլը որ՝ կարծես թէ խաղալիկ մը կը տանէր: Մըշափ զօրաւոր է քաղցրութեամբ ըսուած խօսք մը:

\* \* \*

ՄԵՏՐԵՐԻՆԻՆ ԿՍՏՐԵՐ

ՄԵՏՐԵՐԻՆԻՆ ԶԳՈՒՇՆՈՒԹԻՒՆԵՐ

Մայրերը միտուելին պահելու են որ իրենց զէմքը առաջին դիբըն է, ու իրենց օրինակն ալ առաջին դասն է տըղցը: Մայրեր, ձեր աչուրներէն երեցած անհամբերութեան ցոյց մը, կամ բերններէդ թուած բարկութեան խօսք մը, ձեր զաւակին սրտին վրայ անանկ տպաւորութիւն մը կ'ընէ, որ բոլոր կենսաբերուող մէջ թափած արտասունքնիդ չկրնար անիկայ վերցնել: Մայրեր, նախ և առաջ զգայաւոր ունենալ պէտք է զաւակներուն համար, խորունկ զգացում • միօրինակ փափաք մը անոնց փրկութեանը համար • ինչու որ ձեր զգացումները ինչ որ ըլլան՝ ա-

նոնք դիտեն • և Պար չէ անոնց հսկող աչուրներէն ծածկուիլ:

Չիր առանձնական աղօթքները յաճախ ու որոշուած ատեններ ըլլան միշտ ձեր զաւակներուն համար: Միտքս կու գայ որ երբ դեռ պղտիկ տղէկ մըն էի, նշմարած էի որ հայրս ամէն օր որոշուած ատեններ մէկ յատուկ սենեակ մը կը քաշուէր: Եոջի բերան ասոր ինչպատճառի համար ըլլալը բոլորովին ինծի անձանօթ էր • բայց շատ չըլլեց անոր ինչ ըլլալուն վրայ ալ տարակոյս չմընաց • ու մինակ աս պարագան իմ մտքիս վրայ անանկ վախ մը ու ահարկութիւն մը ձգեց՝ որ բան մը չէր կրնար անիկայ ջնջել:

Վսիկ ետեւ իմ ուշադրութիւնս մօրս վրայ դարձաւ: Եստուն կանուխ կ'ելէի, և իրիկունը ուշ կը պառկէի, ու հսկելով կը դիտէի զինքը ու չէի կրնար գտնալ որ ինք աղօթք կ'ընէր: Ես բանին ստոյգ չգիտնալէս շատ կը ցաւէի: Եւ սկսեցի անոր վրայ կասկածով ու վախով նայիլ • անոր ամէն ըսածներուն և ըրածներուն վրայ կասկած կ'ընէի: Օր մը վերջնապէս, կարծիք ըրի, յոսոյցի, ու գիտցայ որ ինքը աղօթք ըրած էր • ու ետքէն հասկընայ որ իր աւտուան աղօթքի ատենը կանուխ լուսը չձեղքուած կ'ընէր: Ինչու չպիտի մոռնամ որ երբ իր սենեակէն եկաւ ինչ շնորհակալութիւնով ու վստահութիւնով և սիրով գիտիլ վաղեցի:

Միտուելիդ ըլլայ մայրեր, որ ձեր զաւակները սրտես ու չոգնող լրտեսներն են ձեր վարմունքին • ու երբոր դուրս կ'ելլէք ձեր աղօթքի քաշուած սենեակէն, թող անոնք տեսնան ձեր երեսին նայուածքին երկնային հանդարտութիւնէն ու անուշիկ խօսքերէն՝ որ դուք Յիսուսի հետն էիք:

Եստուածաշունչը բոլոր ուրիշ բարեպաշտական գիւրքերէն աւելի սիրելիդ կը խոստովանիք: Եսոր ասանկ ըլլալը թող ձեր վարքը վկայէ: Երբոր աշխատութիւնէ յոգնած ու թուլցած էք, զաւակներնիդ տեսնելու են որ դուք անփոփոխ կերպով Սուրբ Գիթիին վաղելով ձեր պարապութեան հանգիստ միջոցը կ'անցընէք: Ես բանը թող անգամ մը գրուի անոնց հսկող միտքին վրայ, ու անիկ ետեւ հազարաւոր ու բիւրաւոր աղբու ներգործութիւն ունեցող դէպքերն ու անհոգութեան և յանցանքներու մէջ թաղուած տարիները չպիտի կրնան ան տպաւորութիւնը անոնց մտքերէն ջնջել կամ մթնջնջել:

Բայց անՊար է մէկիկ մէկիկ համբել ան ամէն բաները՝ որոնց մէջ ծնողը կրնան իրենց զաւակներուն առջին անյարմար ընթացք մը ցուցնելու վստահութիւն ըլլալ: Մայրեր, զգոյշ եղիք ձեր անձերուն: Չաւակներնիդ ձեր վրայ աչալուրջ հսկողներն են • անոնց աչուրները ամէն շարժումը կը նշմարեն, անոնց ակնմըները ձեր պրուկուրէն ելած ամէն մէկ բառը չփախցնելով կը բռնեն: Ենոնք փոքրիկ մտքին մէջ զիգուած է ան ամէն անհոգութիւնով կը լսուք իրն ու շարժումները • ու ձեր կողմանէ ինչ ջանք ալ որ ընէք, անկարելի է անոնց շտեմարանը բանալով հոն եղածները թալել տանիլ անիկ: Մայրեր, զգոյշ եղիք ձեր անձերուն • ինտո՞ր կրնաք Փրկիչին օրնութիւնը ընդունելու յոյս ունենալ թէ որ զգոյշ կենալու համար անոր այնքան ահաւոր ու շատ հեղ կրկնած պատուէրը զանց ընէք • թէ որ ձեր զաւակներուն վրայով քրնունութիւն ըլլայ թէ Ենոնք ո՞վ սպաննեց, ինտո՞ր պիտի դիմանաք, երբոր բոլոր տիեզերքին աչքը ձեր վրայ դառնան անոնք սպանողները դուք ըլլալիդ տեսնելու:

ՏՂԱՅՈՅ ՀԵՄԵՐ

ԼԱՍՏՈՒՄԻ ԶԵՂՔԵՆ ԿՐԻՆՅՈՅ ՏԵՄԵԱԼԻ

Տիկինին մէկը օր մը երբոր դուրս գացած տեղէն տուն դարձաւ՝ տեսաւ որ իր դաւակը ուրախութեամբ ինք զեմաւորելու չէլաւ, ինտո՞ր որ ասանկ ատեն սովորաբար կ'ընէր: Իր մօրմէն կը փախչուէր, ծակծուկ տեղեր կը պահուէր, անիկէ պարտեզին մէջ կ'երեւորակար, ու միշտ ծածկուիլ կ'ուզէր: Մայրը չէր հասկընար թէ անոնք ընելով ինչ ըսել կ'ուզէր:

Իրիկուն Երբոր մայրը տղան պառկեցունելու համար կը հանուեցունէր, «Մայր», ըսաւ տղան, «Եստուած կը ընայ պահնոցին (պօլսա) դրանք ճեղքէն տեսնալ»:

«Ե, յո», պատասխան տուաւ մայրը:

«Եւ կրնայ նաև տեսնալ երբոր հոն բոլորովին մուծ ըլլայ»:

«Ե, յո», պատասխան տուաւ մայրը, «Եստուած ամէն տեղ կրնայ տեսնալ»:

«Արեմին Եստուած տեսաւ իս, ու պիտի ըսէ քեզի, մայր: Երբոր դուն դուրս ելար, ես պահնոցը բացի, ու կարկանդակը աւել ու ամէն ալ կէլայ • և հիմա կը ցաւիմ, շատ կը ցաւիմ» ըսաւ, ու գլուխը մօրը գիրկին վրայ ծուրով լաց մը փըլցուց:

Իսեղճ տղայ, բոլոր օրը մօրմէն պահուիլ կ'ուզէր՝ ճիշտ Եղամ Եւալին Եստուծոյ անհնազան ըլլալուն ետքը ըրածնուն պէս, որոնք Եղեմին պարտեզին մէջը անոր ներկայութեանէն պահուելու կ'աշխատէին: Եստուած զաւակները իրենց մօրը ու իր մէջ տեղը անդունդ մը բացաւ: Կը տեսնաս թէ իր սխալմունքը ինտո՞ր զատեց զինքը իր մօրմէն • ալ անիկայ մօրը աչքին առջին հանգիստ չէր կրնար ըլլար • իր խաղաղութիւնը գացած էր: Եւ մեղքը ասանկ կը զատէ մեզ Եստուծմէ • ալ չենք սիրեր անոր աչքին երևալը, ինչու որ երջանիկ չենք ըլլար • կը պահուէր իր մէն, ու կ'աշխատէր որ զինքը մոռնանք:

Հիմա Գեորգը ինտո՞ր դարցաւ իր մօրը, և յանցանք գործած ըլլալուն ու ամօթին զգացումէն ինտո՞ր ազատեցաւ: Ենիկայ պիտո աղէկ ու մի միայն շտակ ճամբան բռնեց, այսինքն՝ զղջաց ու խոստովանեցաւ: Իր մայրը անտարակոյս ներքեց անոր, ու անիկայ կրկին մօրը քովելը գգուելը ու անոր սիրելի ընկերութիւնը վայելու անուշ համբը առաւ: Երբէն մօրը վստահութիւնը ու սերը վայելց:

Մենք ալ անշուշտ ասանկ ընելու ենք զէպ'ի Եստուած: Մենք պէտք է մեր մեղքերը խոստովանինք ու զղջանք, ու աղօթք ընենք Եստուծոյ որ Քրիստոսի անունին համար ներք մեզի: Են ատենը թողութիւն գրտնալուն անուշութիւններուն համը կըրնանք առնել, ու ալ վախ չենք ունենար ու իրմէն հեռու չենք մնար:

Ինտո՞ր որ պղտիկ տղայ մը մօրը քովելէն ուրիշ տեղ այնչափ երջանիկ չըլլար, ասանկ ալ Եստուծոյ մօտ ըլլալը Եստուծոյ զաւակի մը սիրտը լեցունելու պիտո հաճելի զգացումներէն մէկն է:

ԿՈՍՏԱՆՍՆՈՒԹՅԱՆ ԵՊՐԻԼ 8, 1857:

ԵԼՄԻՆՆԵՆ ԿԵՐԱՆՆԵՐԻ ՄԵՆՆԵՐԸ

Հայոց Եկեղեցւոյն աս երեւելի գլուխը իր մահանացու ընթացքը լինողը Կոստանի մայրաքաղաքը լինողը, Փետրուարի 13ին: Պատմութեան թիւերը ըլլալով վրայ է յուղարկաւորութեան արարողութիւնը փառաւոր կերպով կատարելու, ու մարմինը լայնածիփ տարուի պիտի թաղուելու:

ԿՐՈՒՍԻԱ ԿԱՐԳԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՂԱՆ ՈՐ ԵՆՈՒՆԱՐԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ ՄԻՔԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

ՏԵՃԿԱՍՏԵՆ. Եւտարանական Միարանութեան Տաճկաստանի ճիւղին կազմուելը, և անոր կանոնները արդէն Եւտարանին թիւ 20 թերթին մէջ հրատարակուած ըլլալով, ուրախութեամբ կիմացանք որ աս Քրիստոնէական սիրոյ կապով միացող Հայազգի Եւտարանական ժողովուրդն ալ նոյն ընդհանուր Միարանութեանը մէջ մտած է. և Մարտի 25ին Չորեքշաբթի օրը Պոլսոյ Լանկայի ժողովարանը դաւանութեամբ աղօթքներ կան աս Քրիստոնէական երեւելի գործին յայտնութեանը համար Եւտարանական օգնութիւնն ու օրհնութիւնը խնդրելու: Ես առիթով նաև համառօտ Ետնախօսութիւններ ալ կըսն Միարանութեան նպատակին ու արգիւններուն վրայով: որոնք յայտնի կը ցուցնեն աս գործին մեծամեծ օգուտները, և անոր յարգութեանն ալ մեծ քաջաբերութիւն կու տան:

ԻՌԵՆԵՍՍ. Ես երկրէն նամակ մը հետեւեալ տեղեկութիւնները կու տայ ան տեղի Պապականներուն մէջ Եւտարանին ըրած յառաջդիմութեանը նկատմամբ:

Վերանորոգութեան գործը Իւլանտայի մէջ կանխ տուած վիճակի մը մէջ է, այլ ասոր հակառակ ճշմարտագէտ կրնայ ըսուել որ՝ բնաւ անանկ ասին մը եղած էր որ գործին յառաջդիմութեանը հիմնականներն աւելի միօրինակ ու օրոշ եղած ըլլաւ: Ես յայտնի պիտի երևայ հետեւեալ իրողութիւններէն: Քոնստանդուպոլի մէջ 7 տարի առաջ 59 անձինք կը գտնուէին Բրոթէսթանդ ժողովներուն, հիմա 1300: Տէրրիկիմայի ժողովներուն մէջ 300 հոգի կը գտնուի որոնց 45ը Եկեղեցւոյ անդամ են, ու բոլոր ասոնցմէ միայն 6 հոգի կան որ բուն Բրոթէսթանդ են, մնացածները Հոռոմեականներէ զարձած են: Աւերի սահմանի մը մէջ ուր ժողովի գրաւորութեանը 7 տարի առաջ միայն 39 հոգի կ'ըլլային, հիմա 500էն աւելի ժողովուրդ կը գտնուի: Տրպլին (մայրաքաղաքը) Զուռուարի 18ին Վերակի օրը 195 չափահաս Հոռոմեականներ ներկայ էին մեր առաւօտեան ժողովին, ու քաղաքին մէջ եղած կիրակիի զանազան դպրոցները 900 մը կը ժողովուին նոյն պէս Հոռոմեականներէն: Կամակին մէջ աս նոյն քաղաքին վրայով սա ալ յիշուած է թէ՛ Կարոյական և Բնիկեական վիճակի փոփոխութիւնը Տրպլին քաղաքին ան մասերուն մէջ՝ ուր որ գործը մեծ ջանքով յառաջ տարուեցաւ, մինչև անգամ բուն իսկ Հոռոմեական Քրիստոնէական շատ անգամ վիճարուած է: Քաղաքին ճամբաներուն

ու նեղ փողոցներուն մէջ՝ ուր որ կրօնական նպատակով մը դաջողը թէ որ Բրոթէսթանդ մըն էր, հարկ թէ ապահով կրնար աչուրնուն երևնալ իրեք չորս տարի առաջ, անանկ անձինքը հիմա փափաքելով կ'ընդունին ու անոնց դաւուստը կը բարեկեն, տեղակները, և նորհակալութեամբ կ'ընդունին, ու Եստուծոյ Խօսքին ալ մեծ եռանդով մտիկ կ'ընեն. աս ամէնը կը միանան սա բանը ցուցնելու թէ Հոռոմեական Քրիստոնէական միտքը մինչև ատկը գոյրդուած է: Երթնցողներուն մեծ բազմութեանը մէջէն զարձի եկողները շարունակ հանգարտ կերպով անդամ ընդունուելու գործը յառաջ կ'երթայ թէ՛ Տրպլին ու թէ՛ Երեւանի կողմը ամսէ ամիս ու տարուէ տարի զարձոյններուն գունդին մէջ բէշ բէշ՝ բայց շարունակ նոր նոր անդամներ կ'եկնայ. ու անոնց համոզումն իսկական ըլլալը փորձուած է սաստիկ ու մաշող հալածանքներու դիմանալու կերպէն:

ԲՐՈՒՍԻԱ. Կարգադրութիւններ եղան որ Եւտարանական Միարանութեան տարեկան ժողովը Պերլին ըլլայ, որ Բրուսելայի մայրաքաղաքն է: Ես ժողովը պիտի ըլլայ՝ թէ որ Տէրը կամ մենայ, Սեպտեմբերի երկրորդ շաբթուն: Սեպտեմբերի 9ին չորեքշաբթի իրեկունը յատուկ աղօթքի ժողով մը պիտի ըլլայ պատրաստութեան: Երթնցող պաշտօնները իրեք լեզուով պիտի ըլլան, Գերմաներէն, Գաղղիերէն ու Եզգիերէն:

Բուն ժողովը հետեւեալ առտուն (հինգշաբթի, Սեպտեմբեր 10) պիտի բացուի Կարնիս (զննորակի) ըսուած Եկեղեցւոյն մէջ, որ Բրուսելայի Վեհ թաղաւորը շնորհք ըրաւ ժողովին գործածութեանը տակ գնելու: Ժողովը պիտի բռնէ մինչև հետեւեալ երեքշաբթին, Սեպտեմբեր 15, ու ամէն օր կրկնուի նիստ պիտի ունենայ:

Ժողովին բացուելուն առնախօսութիւնը Բրոթսթանդ Պատ. Տօքթոր Քրուստիանը պիտի ընէ, և անոր լինելուն հետեւ անանկ որոշուած է որ աս պատահութեամբ ժողովին մէջ ուղերձներ ըլլան հոն ժողովուած զանազան ազգերու և Եկեղեցիներու վերաբերեալ եղբայրներէն: Ենանկ կարծիք կ'ըլլայ որ ասիկայ նոյն օրուան թէ որ բոլորն ալ չէ, մեծ մասը պիտի բռնէ:

Երկրորդ օրուան նիւթն է — 1. Եստուծոյ պատմութեան միջոցին ու արարածներուն մասին: 2. Ես ինչո՞ք լինի Երկրի ստեղծութեանը և արարածներուն ժողովուածութեանը (Գերմանիայի) մէջ, հանդիսէն պարտաւորութիւններով որ իրոց աս վիճակին յառաջ կ'ընեն:

Երրորդ օրը՝ առաջին նիւթն է — Եստուծոյ պատմութեան ընդհանուր քահանայութեանը: Եսկէ ան գին գեռ կարգադրութիւնները լինցած չեն: Բայց խորհրդածութեան ատեն պիտի արուի Հրեաներուն ու Հիթանոսներուն մէջ Քրիստոնէայ Եկեղեցիներուն Քրիստոնէական ան մեծ նիւթին վրայով: Ես նիւթը անանկ կարծուած է որ չորրորդ օրը յառաջ պիտի բերուի: Կամ անանկ կը յուսացուի որ աշխարհիս զանազան կողմերէն շատ մը Քարողիչ Եղբայրներ ալ ներկայ պիտի ըլլան ժողովին:

Վեցերորդ օրը՝ Սեպտեմբեր 15ին ժողովին գործողութիւնները զոցելու պիտի սարապին, հարկաւոր տեսնուած որոշումները ընդունելով, ու վերջաբանական աստիճանութիւնով մը: Ես աս նոյն օրուան իրիկունը ժողովին անդամները՝ թէ զերեք միացնող եղբայրական սիրոյն նշան, ու թէ կենդանի Եստուծոյն մէկ Եկեղեցւոյն ընկերակցութեանը իրար աւելի սերտ միա-

բանութեան մը քաշելու՝ Խաչեալ Փրկչին քաւարար զօհին վրայ երկնց ունեցած հասարակաց հաւատքովը, Տէրունական Բնութեացը մէկ տեղ հաղորդութիւն պիտի ընեն:

Ես ալ նաև իմացուցուած է որ միջոցներ ձեռք պիտի առնուի Բնութեանը Եւրոպական ժողով մը կազմելու համար, մասնաւորապէս Կրօնական Եզատութեան և Քրիստոնէայ ազգաց հետ ու բոլոր աշխարհի մէջ Եւտարանական Քրիստոնէական սերտ կապակցութեանը հոգ տանելու:

ԵՓՐԵՅԷ. Հետեւեալ քաղուած մըն է Քիւրթի ըսուած ցեղէն Քրիստոնէութեան գարձած մէկու մը ատենախօսութիւնէն, որ հարաւային Եփրեկէի մէջ Քարողաց Բնիկութեան ժողովի մը մէջ ըրած է:

«Մենք հոս ժողովուած ենք, բայց ոչ թէ մեր մարմինները կարմիր կաւով կամ ճարպով ճեղքուելու և հիթանոսական պար քաշիներուն միանալու: Մենք հոս ժողովուած ենք, ոչ թէ կախարհութիւնը ընողը իր յանցաւոր խաւարին գործերուն գրգռելու՝ նոյն միջոցին ալ գլխէն մինչև ոտըրը գոգ բռնելով որ չըլլայ թէ մեր վրայ վազէ իր ճանկերովը: Չէ, բայց մենք մէկ տեղ եկանք Եստուծոյ շնորհակալ ըլլալու որ անանկ սիրեց աշխարհը՝ մինչև որ իր Միածին Արդին տուաւ. որ ամէն ո՞վ որ անոր հաւատայ՝ չկորսուի, հապա յաւտենական կեանք ունենայ»:

Եստուծոյ շնորհակալ ըլլալու արժանիքը մեզ կը հրաւիրուի, ու պահենք ան պարզելու մեր սրտերուն մէջը: Երբեք մէկ տեղ դաւելնիս միայն չ'ընենք Եստուծոյ շնորհակալ ըլլալու համար է: Չէ, մենք մէկ տեղ ժողովուած ենք Եստուծոյ շնորհակալ ըլլալու համար իրար գրգռելու, մեր ստացուածքէն մէյ մէկ բան տալու ան գործին օգնելու համար՝ որ մեր ու մեր տղոցը սորվեցուց անմահ հոգի մը ունենալին, ու գերեզմանէն անդին ուրիշ աշխարհ մը ըլլալը՝ որ գեպ'ի հոն մենք շուտ շուտ երթալու վրայ ենք, ու գիտնալու որ մենք մեղաւոր ենք ու Քրիստոսի խաչին վազելու ենք թողութիւն և խաղաղութիւն ստանալու համար: Գուրք ալ ինձի նման գիտեք որ սայլը առանց կոնկրետ տեղէն չ'երեւար, բնաւ տեղէն չ'ապրի շարժի, իր կայնած տեղը պիտի անշարժ կենայ ու փտտի: Եստուծոյ Խօսքը սայլն է, և ստակն ալ կ'ընեն է որ սայլը բոլոր աշխարհ կը անանկ: Ես Խօսքը մեզի բերուեցաւ մեծ ջուրերուն (Սվիհանոս) ան դիկ կողմէն, ու մեր հետը մնաց մինչև հիմա: Բայց մենք ինչ ըրինք կ'ընեմք օգնելու: Բան մը չ'ըրինք. պէտք է որ այսօր իրար գրգռենք սիրոյ և բարի գործերու, ու մեր ունեցածէն տանք որ կ'ընենք կարող ըլլան Եւտարանին սայլը տանելու բոլոր անոնց՝ որոնք անիկայ լեղու կանաչ ունին: Չըլլայ որ ըսէք թէ՛ Ես ստակ չունիմ, անոր համար չեմ կրնար օգնել: Միաբերեալ ըլլայ որ այժերը ստակ են, կովերը ստակ են, կ'ընենք ստակ են, ձիերը ստակ են, մեր արտերուն բերքերը ստակ են: Եստուծոյն որ և իցէ մէկը կամ բոլոր ասոնք՝ միայն թէ յօժար սիրտ ունենանք, կըրնանք տալ սայլն օգնելու որ վազէ, վազէ, վազէ, ու նաև մեր հետն ալ պահէ: Կայեցէք զուրք այսօր. Քարողիչները աս կրկնը չեկան առաջ, մենք ոչ ստակ ունէինք ոչ հանգրձ ոչ տուն ոչ գիւղ՝ ոչ ցորեն ոչ ալ գարի: Մենք Եկեղեցի ալ չունէինք, Եստուծոյն չեկնք ճանչնար, ոչ ալ իր Խօսքը: Աւերին Եստուծոյ Խօսքին տարածուելուն օգնութիւն տանք: Իմ նստելէս առաջ, կ'ընեմ ձեզի՛ իմ բա-

րեկամներս, ինչ որ էս պիտի տամ: Ես պիտի տամ վաղը ըստ անցնելու յարմար մատաղ (կէն) եղ մը»:

ՊԻՐՄԱՆ. Մառութեան Քարողիչ Պատ. Պիլիպպին վարժապետը Քո՞ղբին Քրիստոնէութեան գարձին հետեւեալ պատմութիւնը մեր ընթացողներուն ու շարժութեանը արժան է:

Ես վարժապետին հետ շատ հեղ խօսած էր Քարողիչը կապալաւորութեան յիմարական և մեղաւոր ըլլալուն, և փրկուելու միջոցը Յիսուս Քրիստոսի միջոցով ըլլալուն վրայով: Ինքը կրեմն հաւանութիւն կու տար Քրիստոնէութեան, ինչու որ աղէկ խելքի տէր մարդ մըն էր, բայց ետքը ընդդիմութիւններ կը հանէր: Եստուծոյ բան մը կու գար իրեն նախնիներուն կրօնը ձգելը:

Օր մը Պատ. Պիլիպպին իրեն հետ կը ռատուէր մը գնաց: Հոն խել մը կու գրեք կային, որոնց կրկնապատմութիւն ըրած էր Քո՞ղբը: «Ես աս կու գրեմ քաղաքի տամ պիտի» ըսաւ Քարողիչը, ու սկսեց խօսիլ անոնց, որպէս թէ մարդ էին անոնք:

«Ես ի՞նչ կ'ընես» ըսաւ վարժապետը, «անոնք քու ըսածը չեն հասկընար»:

«Ինչ որ քու ըրած արժեք անոնք կը հասկընան», հանդարտ կերպով մը պատասխանեց Քարողիչը, «իմ ըսած խօսքս ալ պիտի հասկընան»:

Քո՞ղբը աս խօսքին դէմ ըսելը մը չունենալով՝ յուսահատ կերպով մը երեսն ի վեր պաղած կը նայէր. «Պատուելի», ըսաւ, «անոնք հոգե ու ջուրէ շինուած են, չեն կրնար տեսնել, լսել, զգալ, ուսել և հասկընալ: Եսկէ ետեւ մէյ մըն ալ անոնց կրկնապատմութիւն չ'ապրի ընեմ»: Ետք աս կըսաւ Քարողիչին Տիկնին պատմելով, ըսաւ թէ՛ «Իրողը կեանքին մէջ անանկ մտնցած չէի: Իրող որ կու գայ պաշտօնները խելագար ըլլալու են»:

Քանի մը շարաթիւն ետեւ Քո՞ղբը աղօթք կ'ընէր յաւտենական Եստուծոյն, ու կը խօսէր իր հայրենակիցներուն Յիսուս Քրիստոսի մէջ եղած ճշմարտութեանը վրայով:

ԵՍԵՐԻԳԱ. Երբեքայի և Երբեքայի Քրիստոնէայ Սիւրբիան ըսուած Բնիկութիւնը որ Միացեալ Կահանայաց մէջ կազմուեցաւ 6 տարի առաջ, որ ճշմարտ Քրիստոնէութեան տարածուածը ընդարձակեալ Եմբիգայի ու Եւրոպայի Հոռոմեական Քրիստոնէական մէջ, հետեւեալ տեղեկութիւնը կու տայ Եմբիգայի մէջ իր աշխատութեանը վրայով:

«Տեղեկութիւն արուեցաւ մեզի որ մեր Քարողիչներուն աշխատանցը հետ միացած 1000էն աւելի Հոռոմեականներ սրտի փոփոխութեան հաւատալի ապացոյց տուած են: Եստուծոյ զատ շատեր ալ կան հարկաւ որոնց վրայ լուր արուած չէ: Տասը հազարի չափ Հոռոմեական տղաք ու պատանիներ ժողովուեցան Կրիստոնէայի դպրոցները՝ որոնք կամ Քարողիչներէն դաս կ'առնեն, կամ մօտերնին զանուած Եւտարանական Եկեղեցիի մը հետ կապակցեալ դպրոցի մը մէջ: Եստուծոյն չափահաս անձինք, երկի մարդ՝ կնիկ մարդ, հայրեր ու մայրեր, փոքրիկ գունդեր հաւաքուելով անոնց Սուրբ Կիրք դաս կը տրուին՝ որոնք առաջուց կամ բնաւ սորված չէին, կամ շատերն ալ բնաւ մէկ Եստուածաշունչ մը չունէին:

Քաստուրի միջոցէն (250,000) աւելի Հոռոմեականներու հետ անձնական տեսութիւն կըսն որոնք Եմբիգայի վրայ ունէին, ու աս մեր ազգային երկիրներուն գրեթէ ամէն կողմըրը ցրուած, ու ասոնցմէ շատերուն ալ շատ հեղապարտութիւն ըրած են կրօնական նպատակով Բնիկութեան Քարողիչները»:

ԿԵՆՏՐՈՆԵՐԵՆԵՆԵՆ

ՄԻՋԱՏՆԵՐ

Գաղղղիացի բնագետին մէկը քանի մը տարիներ խորհեց մէկ հատ մը միջատի կազմութիւնը քննելու համար, ու գործը անկատար թողուց: Մէկ մատի չափ երկայնութիւն ունեցող միջատի մը մարմինն վրայ, ուրիշ բնագետ մը 306 տարիտակ համարեց մարմինն դուրսի կողմի ծածկոյթը կազմող. 494 մկանունք ատ տարիտակները շարժող, 24 դուրստ ջիւղ, ու 48 զոյգ շնչառութեան գործարան: Հասարակ ճանճին մը աչքին մէջ 6 կամ 7 հազար ոսպնածակ ապակիի պէս բան կայ: Վիշապաճանճը տուած տեսակին աչքին մէջը 12 հազար, թիթեռին (սփիւնիկ) աչքին մէջը 17 հազար: Թիթեռի մը միայն մէկ թւեկն վրայ 100 հազար թեփ գտնուած է: Հասարակ ճանճին թւեկ մէկ մանրերկրորդի մէջ 6 հարիւր անգամ զարնելու ուժ ունի, որն որ 35 ոտք տեղ կը տանի ինքզինքը, քանի որ ձիւնթացի (սփուլ) մը ձին մէկ մանրերկրորդի մէջ միայն 90 ոտք կրնայ վազել: Հատ միջատներու թւեկը անանկ բարակ են որ անոնցմէ 50 հազար հատը թէ որ իրարու վրայ դրուին՝ հազիւ թէ մատնաչափի հաստութեան մէկ քառորդին չափ կ'ըլլան. ու տակաւին թէպէտ աս աստիճան բարակ են, բայց ամէն մէկը երկբացիկ (էփ գոլիւ) են:

ՓԱԼՓԱՆՈՂ ՄԻՋԱՏՆԵՐ

Ըստ տեսակ միջատները հարաւային Եւրոպայ Ռիօ Շանէյթի մէջ առուտուրի մէկ հարկաւորնիւթն են: Ըստնց թւեկը արհեստական ծաղիկներ կը շինուին ու ասոնց զանազան փայլուն տեսակներէն շինուածը տիկիներուն մազին վրայ իբրև զարդարանք կը գործածուին: Մարդ մը յատուկ իր ապրուստը կը ծարէ նաւահանգիստը եկող օտարականներուն զանազան տեսակ միջատներ ծախելով ու ասոնց տասներկու գերի կը պահէ, որոնք շորունակ շատ փնտուած միջատները՝ օձերը ու կեղևները գտնուելու կը զգաղին:

Ըստ հաւասար է նաև հավանայի մէջ փոսուռայի (սփիւնիկ) առուտուրը: Ըստ միջատը՝ որ կը բռնեն ու զգուշութեամբ շաքարի եղէգով կը կերակրեն, տիկիներու հանդերձին վրայ իբրև զարդարանք կը գործածուին: Ըստ կայ շատ մեծ ըլլալուն գիշեր ատեն շատ կը փայլայ: Ընակիչները անոնք արտերէն կը ժողովին, ու քաղաքին օրինորդներուն կը ծախեն. անոնցմէ ոմանք աս միջատները իրենց ապարանջաններուն վրայ փակցուցած արծաթէ պղտիկ վանդակի մէջ կը դնեն, որոնք գիշեր ատեն ծրագի լուսով ազնիւ երևոյթը մը կու տան:

ՃԱՆՃԵՐՈՒՆ ԱՏՈՒՆԵՐԸ

Հատ հեղ սա հարցումը եղած է թէ՛ Ինտոր կ'ըլլայ որ ճանճերը պատերուն և առաստաղներուն (կամ) վրայ կը քալին: Բնագետին մէկը մօտերս աղէկ մը ստուգեց մանրացոյցի օգնութիւնով թէ անոնց ոտուները Ինտոր կազմուած են որ ասանկ կրնան քալել: Ընոնց ոտուներուն մաշկ փակած է բաթի (կօրեկ) ու սագի (գալ) ոտուներուն պէս. ու ոտքին դէպ'ի ետևը ան մաշկի ներքի դին երկու հատ խիստ մանր մատներ կան. որոնցմով մաշկը ամուր մը վար քաշելով կը փակցնեն իր քալած ապակիին կամ պատին վրայ. անանկ որ բոլոր օդը դուրս մղելով՝ հարկաւ դուրսի օդին ձնշուրը ոտուները պատին, և վրայ ամուր կը բռնէ: Երբոր շարժելու գէ, նորէն օդը ներս թող կու տայ, ու ասանկով ուղաճին պէս կրնայ շարժել կամ կայնիլ:

ԿՈՍՏԱՆԴՆՈՒԹՅՈՒՆ ԵՊՐԻԼ 8, 1857:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

ՏՆՃԱՅՍՏԱՆ. Մարտի 28ին շարժողը վեհափառ Սուլթանը այցելութեան դնաց Ընդդիմական եռայարկ պտուտակաւորը Ռոյալ Եւլյերթ, որ Ծովագետին նաև է, ու Վոսիփորի մէջ երկաթ նետած էր Տօլմապահճէի կայսերական պալատին մօտ: Վեհափառ թագաւորը նաև ընդունուեցաւ 21 թիւնթիթի բարեկեղծ, Լորտ Լայընս Ծովագետն ալ անոր բարձր աստիճանին վայելուչ ամէն պատիւը մատուցանելով: Լորտ Սթրալֆօրտ տր'էտքը Վեհափառ Սուլթանը իր պալատականներով, Բարձ. մեծ Վեհափառ Ծովագետն Պատերազմի ու Երտաքին գործոց Պաշտօնեաներն ու Լոմէր փաշան ալ նաև քաջին 'ի պատիւ Վեհ. թագաւորին: Ըստ չեզոք նաևին զանազան կողմերը պըտրեցաւ ու իր մեծ գոհունակութիւնը յայտնեց Վեհ. թագաւորը:

Կաւէն ետ դառնալուն կայմերուն վրայ զօրքը բարեկ կայնած էին, ու կրկին 21 թիւնթիթ արձակուելով իմաց կը տրուէր կայսրին նաև են երթալը:

Ընդդիմական նաւախուրը Մալթա երթալու համար ճամբայ ելաւ:

Երբ զոգրուէն Մարտի 5ին գրուած նաւակով մը լուր տրուած է որ ան նահանգին կառավարիչ Վեհ. Եւլի ինչ փաշան խուճ մը աւազակներ որդ որդ ձեռք անցուցած է, որոնք 60ի չափ են եղեր: Ընոնց զխուճը Տէլէ Խըզըր ըսուած ու վեց ալ ուրիշ ընկերներէն սպանուած են՝ իրենց վրան խրկուած կառավարութեան Պաշտօնակալ Օսման պէյին անձնատուր չըլլալով, որ ինքն ալ ասոնց գէմ պատերազմելու ատենը վերաւորուած ու իրեններէն երկու հոգի ալ մեռած է:

Ըստ չար աւազակապետը իր անօրէն գործին մէջ արդէն շատերուն փաստուած ու շատ մարդիկ ալ սպանած էր, ու եօթը տարի Պօլսոյ Երթունի նաւարանը թին (սփիւնիկ) կենալով անցեալ տարի իր տեղը հասնելէն ետև աս նոյն փաշան քանի քանի հեղ իրեն խրատուէր է որ կրկին նոյն յանցանքին մէջ չգտնուի. բայց ասանկ բարեկամական արդարաբարութիւնները բանի տեղ չըրնելով՝ իր ապօրինաւոր արհեստին մէջ արժանի եղած պատուհասը ընդունեց վերջապէս:

Տէրութեան հզատակներուն ապահովութեան հոգ տանող և աշխուրջ Տըսկոզութեամբ անոնց հանգստութեան ետևէ եղող Պաշտօնեայի մը արժէքը ճանչնալով՝ անանկներուն երախտագէտ շնորհակալութեան արժանի գովելը գործերը Եւստաքերին մէջ ալ հոչակելու մեղի հաճելի ըլլալուն համար է որ հոս յատկապէս յիշած ենք:

Երգչու. Լորտ Իլճին՝ Երտաքոյ կարգի Գիսպան որոշուեցաւ Չինաստանի: Երկայ քանի տարի կառավարիչ էր Գանատայի, ու շատ յաջողակ մէկն է ու հաշտարար վարմունք ունի: Ինքը Ընդդիմական շուտ պիտի ճամբայ ելայ իր պաշտօնին երթալու:

Ընդդիմական զօրք ալ կը խրկուին Չինաստան, որ ազգու զիմադրութիւն մը ընեն Չինացոց՝ թէ որ Գիսպանախօսութիւնները յաջող վախճան մը չունենան:

ՉՈՒՆԵՐ. Բրուսելայի թագաւորը փարիզնատող իր Գիսպանի վերջապէս իմացուց հետևեալները իբրև պայմանը՝ Կէօֆշաթէլի խնդիրը վերջացնելու:

1. Ինքը պահուել է Իլչանս Կէօֆշաթէլի պատուանունը:

2. Չորս տարի առնելու է իր հին կալուածքներուն եկամուտը որ 100,000 ֆրանք կ'ընէ տարին:

3. Ընդհանուր անյիշութիւն մը հըրատարակուելու է բոլոր անոնց համար որ Կէօֆշաթէլի մէջ թագաւորին դատը պաշտպանելու մէջ գտնուեցան:

ՍԱՐՏԵՆԻՍ. Բարս կոմսը որ Եւրոպայի Գիսպան է թուրքին Երթունեաց քով, իր կառավարութեան ետ կանչուեցաւ, ու Վեննա կեցող Սարտենիայի Գիսպանն ալ նաև ետ կանչուեցաւ. և աս կերպով սովորական քաղաքական յարաբերութիւնները կախ մնացած են աս երկու կառավարութիւններուն մէջ: Ըստ ընթացքին պատճառը Եւրոպայի կողմէն կը կարծուի թէ Սարտենիայի Երեսփոխանաց Բողոքին 5 միլիոն ֆրանք արտաքոյ կարգի փոխառութեան մը համար մօտերս տուած քուէն ըլլայ, որ Եւստրիայի սահմանադրուելու եղած Եւրօսանդրիայի ամրութիւնները շինուին:

ԿՄՓՈԼԻ. Թագաւորը կ'երկայ թէ միտք չունի Գաղղիային ու Ընդդիմական առաջարկութիւններուն զիջանելու. ու հիմա նոր Գաղղիական Ֆրկայթ մը խրկուեցաւ կ'ըսուի՝ Կափօլի, իբրև Գաղղիական կառավարութեան կողմէն սպանալիք մը գալիքին, թէ որ զիջում չըլլայ:

ՌՈՒՍԻԱ. Ստոյգի պէս կը համարուի հիմա որ ներկայ եղանակիս Ռուսիայի կայսրը այցելութիւն պիտի ընէ Գաղղիա ու Իտալիա:

ՊԱՐՍԱՅԱՆ. Գաղղիայէն ընդունեցինք կառավարիչ Սէպտեմբըր ըսուած լրագիրով՝ Ընդդիմական ու Պարսկաստանի մէջ եղած ամբողջ նոր դաշնադրութիւնը որ 15 յօդուած կը պարունակէ, և որուն մէկ քաղաքացի օրագրոյ նախընթաց թերթին մէջ գրած էինք:

ՏԵՐՈՒՄԵՐԳԵ. Պարթիկ ծովը մտնող բոլոր նաւերուն հանիմարայի կառավարութեանը վճարած տուրքին նկատմամբ եղած դաշնադրութիւնը ստորագրուեցաւ: Թագաւորը յանձն կ'անէ իր կողմէն որ աս տուրքը Կարիլի սկիզբէն ետև ալ չառնէ, և միւս կառավարութիւնները խօսք կու տան վճարելու հանիմարայի կառավարութեանը իբրև հատուցում՝ գումար մը ստակ հաւասար ներկայ տուրքին հինգ տարուան եկամուտին, տարին հարիւրին և շահ տալով:

ՉԻՆԱՅԱՆ. Հոնկ Բոնիկ հացազորքը որ փորձ ըրաւ Ընդդիմական կառավարը և ուրիշ բնակիչները թունաւորելու, դատաստանի մէջ քննուեցաւ ու սպանուեցաւ, անոր հետ ընկերացող ուրիշ իրեք Չինացիներն ալ մեկտեղ: Հոնկ Բոնիկ մէջ 168 կասկածաւոր անձինք ալ գտնուեցան, ու Ընդդիմական իշխանութիւնը արտաքօսեց անոնք:

Վանթոն մայրաքաղաքին մեծ մասը թէ՛ պարիսպին մէջ ու թէ՛ դուրը կրակով այրեցաւ Ընդդիմացոցմէ:

Մեծ անհանգստութիւն մը կը տիրէ Հոնկ Բոնիկ Ընդդիմական կողմին բնակիչներուն մէջ, որ չըլլայ թէ Չինացիք զօրութեամբ իրենց վրայ յարձակին: Բերքապահ զօրքը քիչոր է, բայց Գաղղիայի ու Եւրոպայի պատերազմական նաւեր կան նաւահանգիստը:

Մեծ պատերազմ մը եղեր է Չինաստանի Քիւնիկ քաղաքը Գիսպանի բերի 8ին, պատասմունքներուն ու Չինուկայսերական զօրաց մէջ, և վերջինները բոլորովին յաղթուէր են ու իրենց մեծ զօրապետը թւեկն վերաւորուէր է:

ԵՄԵՐԻԳԱ. Մարտ Պուքանան Միացեալ Կահանաց Կախազահութեան պաշտօնին անցաւ գալ չորս տարուան համար, Մարտի 4ին: Իր

ատենախօսութիւնը նոյն պարագային վրայ նշանաւոր է չափաւորութեան ու ճին կողմանէ՝ թէ՛ կառավարութեան ներքին ու թէ՛ արտաքին յարաբերութիւններուն նկատմամբ:

Որովհետև Միացեալ Կահանաց տարեկան եկամուտը կառավարութեան ծախքերէն աւելի է, Կախազահը առաւարկած է որ աւելցուէր գործածուի կառավարութեան պարտքին վճարուելու, նաւատորմից աւելցնելու ու ծովեզերքը ամրութիւններ շինելու: Կախազահը կը հրատարակէ որ իր արտաքին քաղաքականութիւնը պիտի ըլլայ խաղաղութիւն և ուրիշ ազգաց գործին չխառնուիլ:

Մարտ Բարս Երտաքին գործոց Պաշտօնեայ որոշուած է, Մարտ Բօպը ելուժող, Մարտ Գլոյտ պատերազմի, Մարտ Թուսի նաւատորմի ու Մարտ Թոմսըն ներքին գործոց:

Միացեալ Կահանաց Կախազահը խրկել տուաւ Լոնտոն բնակող Եւրոպայի Գիսպանի ոսկի ժամացոյց մը՝ Քրոնօկէր ըսուած տեսակէն՝ իբրև ընծայ Միացեալ Կահանաց կառավարութեան Մօրնօ Ընդդիմական նաւապետին, որ Թիւրքիայէն Երեւելան շոգեւ նաւուց Բրիտանական Ընկերութեան նաւերէն մէկուն հրամանատարութեան ատենը Չինաստան՝ ազատեց Եւրոպայի վաճառականի նաւու մը պաշտօնակներն ու նաւատորմները, որ ան կողմերը նաւաբեկութեան հաղիպած էին:

Վանի մը ամիս առաջ վաճառականի մեծ ու գեղեցիկ նաւ մը՝ Կիու Երթուն ճամբայ ելաւ Սան Ֆրանչէսքո երթալու՝ որ 3, 4 ամսուան ճամբայ մըն է, Բաթթօն նաւապետին հրամանին տակը՝ որուն տիկինն ալ նաւուն մէջն էր, ու խելացի կին մըն էր 20 տարեկանի չափ հասակով: Ըստ կինը առաջ ալ մէկ երկու անգամ ճամբորդութեան մէջ հետ գացած էր, ու ծովը գտնուած ատենին ըրօսանքի համար նաւաղորդութեան ուսումին կը պարպէր, ու ինքը սովորեցաւ նաւուն ուր ըլլալը գտնել լայնութեան և երկայնութեան հաշիւով:

Ըստ վերջին նաւազնացութեան մէջ իր նաւապետ Երկը Տիւրքուցաւ ու խելագարեցաւ, և անանկ մնաց ճամբուն միւս մասը: Կիւիլը հիմա նաւուն հրամայելու սկսեց: Կաւապետին օգնականը (Երկրորդ նաւապետը) զեզեց որ ինքը կառավարէ. բայց որովհետև կինը իր երկրինէն լսած էր առաջ որ անկայ անկարող մէկ մըն էր, ու բոլորովին անյարմար իր տեղը անցնելու, թող չտուաւ որ աս գործը ան անէ: Ուստի Օգնականը գաղտուկ համոզել ջանք ըրաւ նաւատորմները որ անոր մէջ տիկ չենն. բայց կինը անոնց ամէնը մէկ տեղ կանչեց ու իր որոշումը անոնց ըսաւ, և խնդրեց որ աս փորձութեան մէջ իրեն ձեռքնտու ըլլան: Ընոնց ամէն ալ որոշեցին որ իրեն նաւապետին ամէն բանի մէջ, ու 50 օր բոլոր հրամանը իր ձեռքն էր: Ըստ եզական ազնիւ Տիկինը չէ թէ միայն նաւին բոլոր Տոքը վրան առած էր, այլ նաև բժշկական գիթերու օգնութեամբ իր երկայնը ամէն պէտք եղած դարմանները ընելով՝ նաւապետի, բժիշկի, ու հաւատարիմ ամուսինի մը բոլորը ներկերը անխոնջ ջանքով կատարեց:

Կալը Սան Ֆրանչէսքո հասաւ 120 օրին մէջ, ու անոր անվտանգ մնալը Կատուածային տեսչութեանը ներքև, բոլորովին միանկ աս կնոջը շարունակ հոգատարութեանն ու ջանքին արգիւնքն էր:

Ըստ նաւը ապահովողները (սփուրթաճէ) հազար թալէն ընծայ տուին, որուն վրայ կ'ըսուի թէ բուն նաւին տէրերն ալ մեծ գուժտը մը պիտի աւելցնեն իրենցմէ:

Բեռական ծովերը ճամբորդութիւն ընող հոչակաւոր Տօքթըր Քէյնը հավանա մեռաւ Փետրուարի 16ին: Հատ կողմանէ նշանաւոր մարդ մըն էր, ու իր մարդասիրական ազնիւ գործերը բոլոր աշխարհին զարմանքը շարժեց: